ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ Հ.16 ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Շարուրի փողոցի հ.29 շենքի հ.16՝ 63.38քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական N27022018-01-0212 վկայականի) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արուսյակ, Արմեն Անդրիկյաններին, Սոֆիկ Գալստյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.29 ՇԵՆՔԻ Հ.16 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջան՝ Շարուրի փողոցի հ.29 շենքի հ.16՝63.38քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Արուսյակ, Արմեն Անդրիկյաններին, Սոֆիկ Գալստյանին.

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N27022018-01-0212 վկայականի՝ քննարկվող բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Արուսյակ Անդրիկյանը (1982 թվականից), Արմեն Անդրիկյանը (1976 թվականից), Սոֆիկ Գալստյանը (1975 թվականից) համատեղ բնակվում են Շարուրի փողոցի հ.29 շենքի հ.16 հասցեում գտնվող բնակարանում /հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Գայանե» համատիրության 22.02.2019թ. և 13.11.2019թ. տեղեկանքի/: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 21.11.2019թ. հ.22/61-992 տեղեկանքի՝ Արուսյակ Անդրիկյանը 1999 թվականից, Արմեն Անդրիկյանը 2000 թվականից, Սոֆիկ Գալստյանը 1978 թվականից հաշվառված են վերը նշված հասցեում:

Քննարկվող բնակարանը փաստացի շուրջ 40 տարի օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 20.02.2019թ. NUS-18/02/2019-1-0382, 20.02.2019թ. NUS-18/02/2019-1-0425, 20.02.2019թ. NUS-18/02/2019-1-0374 տեղեկանքների տրված տվյալների համաձայն՝ Արուսյակ Անդրիկյանի, Արմեն Անդրիկյանի, Սոֆիկ Գալստյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում վերջին հինգ տարիների ընթացքում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Շարուրի փողոցի հ.29 շենքի հ.16 հասցեում գտնվող բնակարանի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ Հ.16 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Շարուրի փողոցի 29-րդ շենքի հ.16 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՐՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ Հ.16 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող Շարուրի փողոցի 29-րդ շենքի հ.16 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**